տասնյոթ տարիների ներդրումը: Նա կանգնած է եղել այդ հաղթանակների ակունքներում, եռանդ ու աշխատանք չի խնայել դրանց հաջողության համար: Իսկ երախտապարտ հայ ժողովուրդը և փառապանծ կոմունիստական կուսակցությունը հարգանքի տուրքն են տալիս լենինյան մեծ գործին նվիրված իր զավակին:

Ս. Պ. ԱՂԱՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐ

Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխության Սովետական կոմիտեի և ՍՍՀՄ ԳԱ նախաձեռնությամբ 1971 թ. օգոստոսի 23—28 Ֆրունզեում կայացավ միջազգային սեմինար «Ագրարային վերափոխումները Միջին Ասիայի և Ղազախստանի հանրապետություններում և նրանց նշանակությունը ազատագրված երկրների համար» թեմայով։

Սեմինարին մասնակցում էին Մոսկվայի, Միջին Ասիայի, Ղազախստանի, Հայաստանի և սովետական մյուս հանրապետությունների տասնյակ գիտնականներ, ինչպես նաև սոցիալիստական որոշ երկրների և Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի երկրների մի խումբ ներկայացուցիչներ։

Քննարկվեցին այն հարցերը, թե ինչպիսի պայմաններում և ինչպես են իրագործվել սոցիալիստական ագրարային վերափոխումները, և ինչպիսի բարձր նվաճումներ են ձեռք բերվել Միջին Ասիայի և Ղազախստանի հանրապետություններում, գյուղատնտեսության բնագավառում։

Պլենար նիստում սովետական Արևելքի հանրապետությունները որպես լենինյան ուսմունքի կենդանի մարմնացում թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Կիրգիզիայի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Տ. Ու. Ուսուբալիևը: Սեմինարի նիստերում հանգամանորեն քննարկվեցին հիմնական զեկուցումից բխող հետևյալ երեք հանգուցային հարցերը.

1 Ագրարային վերափոխումների սոցիալ-տնտեսական նախադրյալները և պատմական պայմանները։ 2 Գաղութատիրության և ֆեոդալիզմի մնացորդների վերացումը հողատիրության մեջ։ 3 Ագրարային վերափոխումների սոցիալ-տնտեսական արդյունքները։ Գյուղատնտեսական արտադրության վերելքի ուղիները և մեթոդները։

Հետաքրքիր զեկուցումներով և հաղորդումներով հանդես եկան Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների գիտնականները և ագրարային ռեֆորմների պրակտիկ գործիչները։

Սեմինարում լսվեց և քննարկվեց ավելի քան 80 զեկուցում և հաղորդում։ Սեմինարում Սովետական Հայաստանի ագրարային վերափոխումների հարցերի վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատակիցներ Վ. Ն. Ղազախեցյանը և Գ. Մ. Գեղամյանը:

Սովետական Արևելքի ագրարային վերափոխումների փորձը, որի մասին մանրամասն խոսվեց Ֆրունզեի միջազգային սեմինարում, կարևոր նշանակություն ունի Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի գաղութային լուծը թոթափած երկրների համար։